**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ**
**ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
Հեռ. 093.27.93.57

10.01. 2019 թ.
Ելք 3

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝
Պարոն՝ Դ. Գևորգյանին

Ձեզ ենք ներկայացնում Սաղմոսավան համայնքի ավագանու 2019թ-ի հունվարի 10-ի թիվ 1,2,3,4 որոշումները, իրենց կից հավելվածներով:

Սաղմոսավան համայնքի ղեկավար Գ.ԱՎԱԳՅԱՆ

*05002835*

Ելք
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի փաստաթղթաշրջանառության
բաժին
11. 02. 2019թ.
Մուտք № Մ-00739-19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ N1

10 հունվար 2019թ.

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով Սաղմոսավան համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել համայնքի տարածքում 2019թ. տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լ.Միքայելյան
Տ.Ավագյան
Մ.Թադևոսյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.Ս. Ավագյան

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի Սաղմոսավան
գյուղական համայնքի ավագանու
10 հունվար 2019թ. N1 որոշման

# ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019թ. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների(ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական(ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15.000 դրամ.

բ. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30.000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ.

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ:

3. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 3500 դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա) մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 2500 դրամ.

բ. 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում մինչև 3500 դրամ.

4. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 500 դրամ:

Սաղմոսավան համայնքի ղեկավար Գ. Ն.Ավագյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ *05002835*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

10 հունվար 2019թ. N2

**ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով Սաղմոսավան համայնքի ավագանին

**ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Սաղմոսավան համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափը սահմանել 120.000(մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լ.Միքայելյան
Տ. Ավագյան
Մ.Թադևոսյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. Ն. Ավագյան

ՀՀ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

10 հունվար 2019թ. N3

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28 –րդ կետի պահանջներով, «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով Սաղմոսավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Սաղմոսավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն կից հավելվածի:

Կողմ-3 Դեմ-0 Ձեռնպահ-0

Լ.Միքայելյան
Տ. Ավագյան
Մ. Թադևոսյան

Սաղմոսավան համայնքի ղեկավար Ն.Ավագյան

*05002835*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

10 հունվար 2019թ. N4

## ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով

**Սաղմոսավան համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել Սաղմոսավան համայնքի 2019 թվականի բյուջեն

**Կողմ-3** **Դեմ-0** **Ձեռնպահ-0**

Լ.Միքայելյան
Տ. Ավագյան
Մ.Թադևոսյան

ՍԱՂՄՈՍԱՎԱՆ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Ն. Ավագյան